PTA-ի անդամակցության վերաբերյալ հաճախակի տրվող հարցեր

Այս փաստաթուղթը նախանշում է PTA-ին անդամակցությանը վերաբերող մի քանի հիմնական հարցերի պատասխաններ

- Ինչու՞ պետք է անդամակցեմ PTA-ին:

  PTA-ը բոլոր ծնողներին և խնամողներին առաջարկում է ներգրավվել իրենց երեխայի ներուժի զարգացմանը: PTA-ի անդամ լինել նշանակում է, որ դուք մի հզոր կազմակերպության և գործունեության ծրագրի մի մասն եք կազմում, որն իր կենտրոնացումը դնում է ձեր երեխայի կրթությունն ամրապնդող ծրագրեր և նախաձեռնությունների վրա:

  PTA-ի անդամակցությունը և անդամավճարը ուղղակիորեն աջակցում են ձեր երեխային, ֆինանսավորելով էական ուսումնական և դասավանդման ծրագրի կարիքները և ձեր երեխայի ու մանկավարժներին իրավունքները պաշտպանում են՝ տեղական, նահանգային և ազգային մակարդակներով և դպրոցի ներառական համայնք են կառուցում բոլոր ընտանիքների համար: Միացեք PTA-ին ձեր երեխայի համար, քանի որ մեր անդամակցությունն ավելացնելով, թեկուզ դա լինի մեկ անդամով, հնարավորություն է ստեղծվում ապահովել ուսումնական կարևոր ռեսուրսներ, բարձրաձայնել կարևոր խնդիրներ և ստեղծել ավելի ուժեղ դպրոցական համայնք:

- Ու՞ր է գնում անդամավճարը իմ :

  PTA-ի անդամավճարը ուղղակիորեն աջակցում է ձեր երեխային: PTA-ի վճարումներն օգնում են ֆինանսավորել դպրոցի էական ռեսուրսները և դասավանդման ծրագրերի կարիքները, ներառյալ պարտեզը, խմելու ցայտաղբյուրը և ճաշի սեղանի վերևի ծածկերը: PTA-ի վճարումներն աջակցում են և շահերի պաշտպանության ջանքերին՝ տեղական, նահանգային և ազգային մակարդակով, որոնք վերաբերում են ձեր երեխայի առողջության, անվտանգության և կրթության որակի հարցերին: PTA վճարումներն աջակցում են մեր աշխատանքին՝ ձեր ընտանիքի, ձեր երեխայի դասընկերների և նրանց ընտանիքների և ուսուցիչների միջև կապերն ամրապնդելու՝ բոլորի համար առաջադեմ և ներառական համայնք կառուցելու համար:

- Արդյո՞ք PTA-ի անդամակցությունը պահանջում է կամավոր աշխատանք և մասնակցություն ժողովներին

  Միակ բանը, որ պահանջվում է ձեզանից PTA-ի անդամակցելու համար, դա տարեկան անդամավճարն է: Բացի դրանից, PTA-ի այլ ախշատանքներին մասնակցելը ընտրովի է և կախված է ձեզանից: PTA-ն բոլոր ծնողներին և խնամակալներին հնարավորություն է տալիս ներգրավվել իրենց երեխաների ներուժի զարգացմանը: Ներգրավվածությունը դպրոցական միջոցառումների կամավոր աշխատանքներին և մասնակցությունը՝ տեղական, նահանգային և ազգային մակարդակներով շահերի պաշտպանությանը, ինչպես նաև մինչև PTA-ի ղեկավար դեր ստանձնելու ներդրած ձեր ջանքերի աստիճանը կախված է ձեզանից: Դեպի PTA գնալու սխալ ճանապարհ չկա:

- Որպես անդամ որքա՞ն ժամանակ պետք է տրամադրեմ PTA-ին։

PTA-ի անդամակցությունը պահանջում է այնքան ժամանակ, որքան դուք կարող եք ներդնել։ Ներգրավվելու սխալ կամ ճիշտ ձև չկա։ Այն ամենը, ինչ կարող եք տալ՝ լինի դա ժամանակը կամ թե դրամ այն կաջակցի ձեր երեխայի պոտենցիալին։

- Միթե՞ PTA-ը սոցիալական ակումբ չէ տնային տնտեսուհիների համար։

Նախ և առաջ, PTA-ն ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար է, ով դպրոցում երեխա ունի։ PTA-ը մայրիկների, հայրիկների, խնամողների, տատիկ-պապիկների, ուսուցիչների և ավելի լայն համայնքի համար է։

Չնայած PTA-ի կողմից կատարված որոշ աշխատանքներ կարող են զուտ սոցիալական թվալ, այդ թվում՝ ընտանեկան իրադարձություններ, երբ մենք կարող ենք անձամբ հանդիպել, օրինակ՝ Դպրոցի վերամուտի նախաճաշ ուսուցիչների համար և ճաշ ձեր միջին դպրոցի աշակերտի հետ, որոնք կազմակերպվել են դպրոցական համայնքի ամրապնդման համար, PTA-ի աշխատանքի մեծ մասը կենտրոնացած է դպրոցական հիմնական ռեսուրսների և ուսումնական ծրագրերի կարիքների ֆինանսավորման, ինչպես նաև՝ տեղական, պետական և ազգային մակարդակի քարոզչության վրա՝ ձեր երեխայի առողջության, անվտանգության և կրթության որակի բարելավմանը նպաստող որոշումներ կայացնելուն։

- Ինչպե՞ս է PTA- վստահեցնում, որ դպրոցի յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի այն կկարողանա ներկայացնել։

Մենք խրախուսում ենք դպրոցի յուրաքանչյուր ընտանիքի PTA-ի անդամ դառնալ, իրենց երեխայի հաջողություններին աջակցելու համար։ Մենք ցանկանում ենք անդամակցության բազմազանության բազա ապահովել, որը կարտացոլի դպրոցի բոլոր ընտանիքների և աշակերտների կարիքները։ PTA-ն ամրապնդում է կապը ձեր ընտանիքի, ձեր երեխայի դասընկերների, ինչպես նաև նրանց ընտանիքների և ուսուցիչների միջև, ստեղծելու բարեկեցիկ և ներառական համայնք բոլորի համար։

- Ինչպե՞ս է PTA-ը ազդում իմ երեխայի վրա։
  - PTA-ը դպրոցներին ապահովում է փորձագետներով, ռեսուրսներով, վերապատրաստման և ազգային տասնյակ ճանաչված ծրագրերով՝ ուսուցումը բարելավման համար, որոնք բարենպաստ ազդեցություն են ունենում երեխայի կրթության վրա, ինչպիսին է «Ընտանեկան ընթերցանության փորձառությունը» համագործակցված «Ընթերցանության հիմունքների» հետ։
  - PTA-ն ֆինանսավորում է երկրի ամենամեծ և աշակերտական արվեստի շարունակական ծրագրին՝ Reflections®, որը աշակերտներին մուտք հնարավորություն է տալիս դեպի արվեստի, երաժշտությունի, գրականությունի, պարի, դրամայի և տեսողական արվեստի զարգացման բնագավառներ։
  - Ազգային շահերը պաշտպանելու PTA-ի ներդրած ջանքը օգնել է հիմնել համընդհանուր մանկապարտեզի և դպրոցական ճաշի ազգային ծրագրեր, անչափահասների իրավահավասարության համակարգ և պայքար է տարել անչափահաս երեխաներին անօրեն աշխատեցնելու դեմ՝ նրանց իրավունքները պաշտպանության համար։ :

Ինչպե՞ս եք դուք պաշտպանում մեզ ազգային, նահանգային և տեղական մակարդակով և ինչքանո՞վ է դա կարևոր իմ երեխայի համար:

PTA-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տեղական, պետական և ազգային մակարդակով, որոնք ազդում են ձեր երեխայի առողջության, անվտանգության և կրթական որոշումների որակի վերաբերյալ: Անցյալ 120 տարիների ընթացքում PTA-ն ջանքը է ներդրել ազգային իրավունքների պաշտպանության համար, հիմնելու՝ համընդհանուր մանկապարտեզ, Համազգային դպրոցական սննդի ծրագիր, անչափահասների իրավահավասարության համակարգ և անչափահաս երեխաներին անօրեն աշխատեցնելու դեմ՝ նրանց իրավունքները պաշտպանության համար: